

# Ծանր Օրեր Հայութեան Համար

Նպատակս ոչ սարսափ ստեղծել է, ոչ խուճապի մթնոլորտ եւ ոչ ալ յուսահատութիւն: Պարզապէս կը փափաքիմ կարելի համառօտութեամբ նկարագրել քաղաքական այն պայթուցիկ կացութիւնը որ այսօր կը տիրէ Հայաստանի, Արցախի եւ Ատրպէյճանի մէջ:

Նախ շեշտեմ վտանգաւոր վիճակ մը. Հայաստան, Արցախ եւ հայ ժողովուրդ պարզապէս առանձին են այսօր: Առանձին, անտէր, անբարեկամ: Այսպէս եղած էին 1917-1918ին, այսպէս էին 1920ի աւարտին: Եւ մենք որ կը հաւատայինք թէ ալ տագնապահար սարսափներն ու խուճապները մերը չէին, չէին կրնար ըլլալ, ահաւասիկ մենք զմեզ կը գտնենք մեր պատմութեան ամենէն ճակատագրական մէկ պահին առջեւ: Որո՞ւն դիմել, որո՞ւն վստահիլ, ո՞վ բարեկամ նկատել:

Այս շարքուան սկիզբը օտար հեղինակաւոր թերթեր, հնչեցուցին ահագանգը՝ Արցախի մէջ քաղաքացիական պատերազմի մը հաւանականութեան մասին. ոմանք «Երկրորդ Լիբանան» մը գուշակեցին՝ այդ արտայայտութեամբ խորհրդանշուող ամբողջ արհաւիրքով, սարսափով: Եւ մենք ոչ մէկ պատճառ ունինք խորհելու թէ քաղաքացիական ընդհարում մը - որ կրնայ շատ արագօրէն վերածուիլ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ յայտարարուած ընդհանուր պատերազմի - անհիմն է: Ընդհակառակը, շատ հաւանական է:

Նախ անոր համար, որ Խորհրդային կառավարութիւնը կը թուի լիքով ըլլալ մեզ եւ մեր իրաւունքները իրենց բախտին. աւելի նիշդը՝ Ազերի թուրքաթարներուն: Եւ այս իրողութեան շատ լաւ գիտակցած են Ազերիները, որոնք այնքան ամբարտաւան եւ վայրահաջ որքան երբեք չէին եղած, իրենց ժանիքները սկսած են սրել՝ թափուելիք անմեղ արիւնքն հոտէն արդէն իսկ արբշիռ: Եւ ո՞վ կրնայ մեղադրել զիրենք իրենց անամօթ պոռոտախօսութեան, սպառնալիքներուն եւ ոճրագործութիւններուն համար: Այս բոլորը արդիւնք են Մոսկուայի իշխանութիւններուն կողմէ ցոյց տրուած լռութեան, անտարբերութեան, պիտի ըստի նոյնիսկ՝ անպաշտօն քաջալերութեան: Ինչպէ՞ս տարբեր ձեւով մտածել՝ երբ Ազերին - Արցախի մէջ կամ Պաֆու կամ Սոււկայթ - օր ցերեկով կը սպաննէ, կը թալանէ, կը հրկիզէ, բայց հայն է որ կ'ամբաստանուի եւ կը պատժուի իշխանութիւններուն կողմէ: Ինչպէ՞ս լռել՝ երբ Ազերի աւազակները օր ցերեկով կ'անցնին Հայաստանի սահմանը, կը սպաննեն հովիւ եւ հողագործ, կը թալանեն հարիւրաւոր ոչխար ու արջառ՝ բայց անպատիժ կը մնան, թէն սահմանապահ զօրքերը հոն են, ակաճատես եւ վկայ: Ինչպէ՞ս հանդուրժել, որ երբ կատարուող ոճրագործութիւններուն մասին կը յայտնուի Խորհրդային Միութեան նախագահ Կորպաչեւի՝ ան սառնասրտօրէն կը պատասխանէ. «Բայց չլսեցիք թէ հայ մը երէկ Պաֆուի մէջ մահակով յարձակած է Ատրպէյճանցի քաղաքացիի մը վրայ...»: Կարծէք հայ մնացած ըլլար ոճրագործներու այդ բոյնին մէջ, եւ համարձակէր դաշոյն կամ ատրճանակ բարձրացնել ոճրագործներուն վրայ...:

Այո, այսօր պարզ է Խորհրդային կառավարութեան համար:

Քաղաքացիական պատերազմ մը հաւանական է նաեւ անոր համար որ Պաֆուի գլխաւոր հրապարակին վրայ կատարուող բազմամարդ հանրաժողովները ճակատումի եւ ընդհարումի մթնոլորտ ստեղծած են. Արցախի դէմ կատարուող խափանարարութիւնները - ճամբաներու եւ երկաթուղիի փակում, արգիլում շինանիւթերու եւ սննդամթերքի ներածումի, կասեցում ամէն յարաբերութեան - այդ մթնոլորտը տագնապի վիճակի բարձրացուցած են, եւ Արցախէն ներս կատարուող ոճրագործութիւնները այդ տագնապը վերածած են պատերազմական ընդհարումի մը հաւանականութեան: Արցախ, ուր բազմահազար բանակայիններ կը գտնուին իրենց հրասայլերով եւ արագահարուածներով, անպաշտպան կը թուի ըլլալ. Ստեփանակերտէն դուրս գրեթէ կարելի չէ ելլել: Ճամբաներուն վրայ սպաննութիւնները, ահաբեկումները, ինքնաշարժներու ֆարկոժումները ամէնօրեայ պատահարներ են:

Եւ ո՞ր է իշխանութիւնը:

Ո՛չ մէկ տեղ:

Ձիւնուորներու ընկերակցութեամբ Հայաստանէն Արցախ գացող ինքնաշարժներու շարասիւններ տեւաբար հրացանային համագարկներու կ'ենթարկուին օր ցերեկով, նոյնիսկ «Քաջարի» Ազերի կիներու կողմէ: Ինչպէս արեւելահայերը կը նկարագրեն, «ջարդոտուած» գլուխներով եւ մարմիններով հայ վարորդները հագիւ կը հասնին Ստեփանակերտի հիւանդանոց կամ կը վերադառնան Հայաստան:

Եւ ո՞ր է իշխանութիւնը:

Ո՛չ մէկ տեղ:

Նախկին Գանձակ (այժմ Կիրովապատ) քաղաքին մէջ Խորհրդային Միութեան Մարաշախտ եւ սիրուած հերոս Յովհաննէս Բաղրամբանի յուշարձանը ֆարուֆանդ եղած է: Հայերու բոլոր դիմումներն ու բողոքները անարձագանգ կը մնան: Հազարաւոր հեռագիրներ եւ նամակներ դրկուած են Խ. Միութեան Պատերազմական Նախարար Դմիտրի Շագովին, եւ սակայն Մոսկուայի մէջ երբ իրեն այս մասին կը հարցուի՝ կը պատասխանէ սառնութեամբ. «Բացարձակապէս անտեղեկ եմ այդ պատահարէն»:

Եւ ո՞ր է իշխանութիւնը:

Ո՛չ մէկ տեղ:

Արցախի Շուշի քաղաքին մէջ «պղծուած» է Խորհրդային Միութեան կրկնակի հերոս, օդաչու Նելսոն Ստեփանեանի յուշարձանը. Ստեփանեան՝ ամբողջ Անդրկովկասի միակ կրկնակի հերոսը: Եւ մինչեւ այսօր հայերը կը սպասեն դատական հետապնդումի եւ ոճրագործներուն ձերբակալութեան:

Եւ ո՞ր է իշխանութիւնը:

Ո՛չ մէկ տեղ:

Արցախի հարցին լուծումը յարատեւօրէն կը ձգձգուի Խորհրդային իշխանութիւններուն կողմէ: Ազգութիւններու Խորհուրդին նստաշրջանը տեւաբար կը յետաձգուի, ստեղծելով անվստահութեան, թերահաւատութեան եւ



# ԾԱՆՐ ՕՐԵՐ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

(Ծար. 3րդ էջէն)

յուսալուծի ալիք Հայաստանի եւ Արցախի մէջ: Իսկ այդ յետագումները աւելի յոխորտ եւ յանձնապաստան կը դարձնեն Ազգերի ստահակները, որոնք ալ սանձարձակ բռնութիւններու սկսած են:

Եւ դարձեալ պէտք է հարցնել. ո՞ր է իշխանութիւնը: Ո՞ր:

Ատրպէյճանի ամենէն կրփոտ հայատեացը՝ «պատմաբան» Զիա Բունիաթով, տակաւին վերջերս ստորագրած յօդուածի մը մէջ ալ ցնորայինի սահմանները մտնող անարգ գրպարտութիւններ կ'ընէր հայ ժողովուրդին հանդէպ ընդհանրապէս, եւ Ամենայն Հայոց Վազգէն Ա. Կաթողիկոսին, Սիլվա Կապուտիկեանին, Պարոյր Սեւակին եւ ուրիշներու հասցէին, մասնաւորաբար: Ան Վազգէն Վեհափառը կը դարձնէր գործակից Իօն Անթոնեսուֆուի, որ Համաշխարհային Երկրորդ Պատերազմի ընթացքին Ռումանիոյ բռնապետ ղեկավարն էր, հաւատարիմ դաշնակիցը Հիթլերի, եւ վայրագ ֆաշիստ մը: Պատերազմէն ետք ան դատուեցաւ, մահուան դատապարտուեցաւ եւ վիճուող գործադրուեցաւ: Վազգէն Վեհափառը որեւէ կերպով կապել այսպիսի մարդակերպ հրէշի մը՝ ստորնութիւն է, եւ այս պատճառով է որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը դիմած է Մոսկուա՝ դատական պատասխանատուութեան կանչելով անամօք գրպարտիչը:

Օգոստոս 17ին, Պաֆուի «Վիշֆա» օրաթերթը, որ օրկանն է Ատրպէյճանի Համայնավար Կուսակցութեան Կեդրոնական Կոմիտէին, հրատարակեց «Կոչ» մը՝ ստորագրուած Ատրպէյճանի մտաւորականներուն եւ գանազան կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն կողմէ: Հոն, հայոց դէմ վայրահաչութիւններէ ետք, կը յայտարարուի.

«Այս ծայրայեղ կացութեան մէջ, Ատրպէյճանցի ժողովուրդին համար միակ միջոցն է զինակոչել իր բոլոր բարոյական, քաղաքական եւ ֆիզիքական ուժերը՝ կասեցնելու համար այն մութ ուժերը որոնք անվստահութեան եւ թշնամութեան սերմեր կը ցանեն»:

Իսկ որոշումներուն մէջ են հետեւեալները.

«- Վերջ պէտք է տրուի Լեռնային Ղարաբաղի արուեստականօրէն բարձրացուած հարցին: ... Միանգամընդմիջտ կը յայտարարենք բոլորին թէ Լեռնային Ղարաբաղը Ատրպէյճանեան հող է: Նոյնիսկ ափ մը հող այս երկրէն ձեռքէ պիտի չհանենք: Լեռնային Ղարաբաղը այնքան անբաժանելի մէկ մասն է Մեծն Ղարաբաղի ինչպէս է սիրտը՝ հոգիին»:

«- Ատրպէյճանցի ժողովուրդը կը պահանջէ արագ պատժումը այն ծայրայեղականներուն որոնք ապօրէն պահանջներ կը դնեն ուրիշներու հողին վրայ: Օր օրի անոնք միջազգային յարաբերութիւններուն կը պատճառեն առաւելագոյն պրկում, եւ անոնք կը գործածեն ուժ՝ ընդդէմ տրամաբանութեան»:

«- Յատուկ Կառավարման Յանձնախումբէն եւ Հրամանատարէն կը պահանջենք կարելի փութով դադարեցնել խափանարարութիւնները Լեռնային Ղարաբաղի մէջ, եւ անմիջապէս կանխարգիլել Հայաստանի Հանրապետութեան միջամտութիւնը՝ Ատրպէյճանի ներքին գործերուն»:

«- Լեռնային Ղարաբաղի եւ անոր սահմանակից շրջաններուն մէջ բնակող Ատրպէյճանցիներուն ապահովութիւնը պահպանելու, սուր տարածայնութիւններու տարածումը կանխարգիլելու, ռերային գործողութիւններուն վերջ տալու, եւ ծայրայեղ այս կացութեան մէջ ժողովրդային միակամութիւն ստեղծելու նպատակով՝ կազմել Ղարաբաղին օգնելու յանձնախումբ մը»:

Այսինքն:

Պատերազմի կոչ մը պարզապէս: Ատրպէյճանի Համայնավար Կուսակցութեան պաշտօնաթերթին մէջ:

Եւ ո՞ր է իշխանութիւնը:

Ո՞չ մէկ տեղ:

Սակայն այդ իշխանութիւնը *ամէն տեղ* պիտի ըլլար՝ եթէ վերոյիշեալին

հառորդ փնախնդրութեամբ «կոչ» մը հրատարակուէր Հայաստանի մէջ: «Ա՛հ», պիտի կատղէին Մոսկուայի մէջ, «այս կոռուազան եւ տեղիւնաւոր հայերը...»:

\*\*\*

Բայց նոյնիսկ եթէ ընդհարում մը տեղի չունենայ - եւ բոլորս պէտք է աշխատինք կանխել *որեւէ* ընդհարում - Արցախի ապագան շատ հեռու է փայլուն ըլլալէ. ինչ կ'ըսեմ, ապագան պարզապէս մութ է:

Վերջին բայց յատկանշական օրինակ մըն է Կառավարման Յատուկ Յանձնախումբի նախագահ Արթուրի Վոլսֆի յայտարարութիւնը «Նիւ Եորք Թայմզ» օրաթերթի թղթակից Պիլ Քեյլըրի: Երկու ժամ տեւող հարցազրոյցի մը ընթացքին Վոլսֆի կը խօսի Արցախի ապագային մասին եւ կ'ըսէ թէ մի քանի կարելիութիւններ կան. ամենէն առաջ՝ վերահաստատել տեղական կառավարական եւ կուսակցական մարմինները՝ Յանձնախումբին վերապահելով շրջանին ոստիկանութեան եւ ապահովութեան ուժերուն իշխանութիւնը: Բայց արդէն Արցախի հայերը իրագործեցին նման բան մը՝ երբ անցեալ ամիս 75 անդամներէ բաղկացած Ազգային Խորհուրդ մը կազմեցին, շրջանին ամբողջ իշխանութիւնը իրենց ձեռք առնելով:

Սակայն Վոլսֆիի ծրագրին մէջ կայ նաեւ կէտ մը՝ որ փաստօրէն Արցախը երկուքի պիտի բաժնէ, ստեղծելով Կիպրոսի թննուկին համանման ողբերգութիւն մը, կամ երկրամասը վերածելով կոռուախնձոր Լիբանանի: Այսպէս, Վոլսֆի կ'ըսէ թէ Արցախի հարաւային մասը - ամենէն բարեբերը - Շուշի քաղաքով եւ յարակից գիւղերով պէտք է անցնի Ատրպէյճանի իշխանութեան՝ «հանդարտեցնելու համար Ատրպէյճանցիները»: Ան կ'աւելցնէ թէ այս կարելիութիւնը *արդէն խորհրդակցութեան նիւթ է*, հաւանաբար Մոսկուայի մէջ՝ ուրկէ տակաւին անցեալ շաբաթ ինք Արցախ վերադարձաւ: Կը նշանակէ որ Արցախը բաժնելու կարելիութիւնը արդէն իսկ կայ:

Բայց այս ռերապարտ բաժանումը արդարացնող պատճառաբանութիւնն է որ գազրելի կը գտնեմ, ընդվզեցնող եւ մեր ժողովուրդը քրտօրէն անարգող: Վոլսֆի կ'ըսէ. «Ատրպէյճանի բոլոր մտաւորականները, ղեկավարները եւ հարուստները Շուշիի մէջ ամառանոցներ ունին, եւ անոնք չեն կրնար պարզապէս հրաժարիլ այդ ստացուածքներէն: Անոնք միշտ ալ Շուշին կը համարեն իրենց մարգարիտը: Մինչդեռ հայերը կ'ըսեն թէ իրենց նախնիներուն գերեզմանները կան Շուշիի մէջ: Հետեւաբար փոխանակութեան կարելիութիւնը ներկայիս չկայ, որովհետեւ անոնք գերեզմաններու մասին կը խորհին: Թերեւս, երբ անոնք պատրաստ ըլլան ապրելու մասին մտածելու, կրնանք լուծում մը յաջողցնել»:

Ճիշդ այսպէս, այս բառերով, ներմակի վրայ սեւ, շատ սեւ տառերով:

Մեղադրուի՛ որովհետեւ տասը հազարը անցնող գերեզմաններուդ սրբապղծուելուն դէմ ընդվզած ես:

Փառաբանուի՛ պրեժնեւեան օրերու շահատակութիւններովդ դիզած հարստութեամբ կառուցած ամառանոցներէն չկարենալ բաժնուելուդ համար: Փառաբանուի՛ եւ արդարացուի, նահատակցուի լուսապսակն ալ կանխիկ ընդունելով:

Արդարութիւն: Սիամանթօն ութսուն տարի առաջ յայտնած է իր համոզումը այդ մասին:

Իսկ մե՞նք: Ի՞նչ ընենք, որո՞նք դիմենք, ի՞նչ միջոց գտնենք:

Միակ յոյսի նշոյլը այն է որ Վոլսֆի Արցախի ապագային մասին խօսած ատեսս վըստ նաեւ թէ ան կրնայ բոլորովին անջատուիլ Ատրպէյճանէն եւ ունենալ խորհրդարան մը՝ երկու անջատ բաժանումներով - մին հայերուն, միւսը տեղացի ազգերիններուն համար: Եւ Վոլսֆի կ'աւելցնէ. «Արցախ պիտի չվերամիանայ Հայաստանի - գէթ ո՛չ անմիջական ներկայիս -, որովհետեւ նման բան մը Ատրպէյճանը պիտի կատղեցնէր»:

Ինչ ալ պատահի, եկող օրերը դժուար պիտի ըլլան եւ շատ փորձանաւոր, մեր բոլորէն պահանջելով առաւելագոյն շրջահայեցութիւն, ինքնագազու, եւ համբերութիւն: